

ՄԵԼԿ

Տարեկան դիրք 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի մանկավարժական սկզբունք.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներսիսեան դպրոցը. Թիֆլիսի ձիարշաւը. Նամակ կարտից. Ներքին լուրեր.—ԱՐՏՍՈՒՄ. ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոստի աղջկային ժողովի նիստը. Միջնադարեան ուղեորութիւն. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԻ ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆԻՐ

«Մշակի» № 103-ի մէջ տպւեց Ղուբայից մի նամակ, որի մէջ մեր թղթակցը, խօսելով հայոց դպրոցի հոգաբարձութեան կողմէ յարուցված հարցի մասին՝ հրէայ երեխաներին հայոց դպրոցում ընդունելու վերաբերմամբ, անհայտարարութեամբ է գրտնում այդ հարցի դրական կերպով լուծելը, ասելով որ հրէայ մանուկները հայերէն չիմանալով, վարժապետները ստիպված կը լինեն առանձնապէս պարապել նրանց հետ, վարժեցնելով նրանց հայոց լեզուի մէջ. այդպիսով հայ մանուկներին չափ պատարաստ չը լինելով ընդունել ուսումը, հրէայ մանուկները դժուարութեամբ կը սովորեն առարկաները, և արդեւ դառնալով դասատան մէջ ուսման կանոնաւոր մատակարարման, ընդհանրապէս, դպրոցի մէջ ուսման ընթացքը կը դանդաղի, ուսումը յետ կը մնայ և այլ ևս չի նկատվի հայոց դպրոցի մէջ առաջվայ առաջադիմութիւնը, երբ միմյան մայրենի լեզուին տեղեակ հայ մանուկները անխառն էին սովորում իրանց դպրոցներում:

Բացի սրանից թղթակցին աւելացնում է, որ այդպէս մանուկներին հայոց հոգեւոր դպրոցներում ընդունելը՝ օրէնքին հակառակ է:

Մենք չենք խօսի այդ վերջին կէտի մասին, թողնելով մեր հոգեւոր իշխանութեանը լծուելու հարցի որքան օրինական լինելը: Բայց մենք կուզենայինք մի երկու խօսք ասել մեր թղթակցի յարուցած խնդրի առիթով միմյան մանկավարժական տեսակետից:

Կարծում ենք աւելորդ կը լինէր մեր կողմից կրկնել, որ զա մանկավարժական մի ապացուցված ճշմարտութիւն է, մի ա կի ս օ մ ա է, որ առհասարակ մանուկներին մատակարարված ուսումը այն ժամանակ միայն կատարեալ աջողութեամբ է ընթանում, երբ այդ ուսումը աւանդվում է մայրենի լեզուով:

Մակայն երբ որ այս կամ այն աղբի մանուկները բնածին, ցեղական մեծ ընդունակութիւններ ունեն շուտով օտար լեզուները իրացնելու,—նրանց ուսումը դպրոցներում դարձեալ կարող է բաւական աջողութեամբ ընթանալ, աւանդված լինելով և օտար լեզուով: Մենք տեսնում ենք, որ մանկութիւնից մի խօսք ռուսերէն չիմացող կովկասեան գիւղացի մանուկները՝ օրինակ լուսեցի, դաւայուցի հայերը, իմերէններն ու վրացիները, և նոյն իսկ հրէաները, մանկելով պետական և քաղաքային դպրոցները, կարողանում են այդտեղ աջողութեամբ ուսում առնել և ուսում աւարտել:

Անուրանալի է, ի հարկէ, որ ամեն աղբի և ամեն ցեղի մանուկները ոչ մի լեզուով այնքան աջողութեամբ, այնքան զիւրին կերպով չեն սովորում, որքան իրանց մայրենի լեզուով: անուրանալի է, որ ոչ մի լեզուով նրանք այնչափ առաջադիմութիւն չեն անում, որչափ իրանց մայրենի լեզուով ուսում առնելով.—բայց և այն ժամանակ երեխայի ուսումը բաւական աջող է առաջ գնում, երբ երեխան դպրոց մանկուց առաջ արդէն քիչ թէ շատ տեղեկութիւն ունէր իր համար օտար լեզուի մասին:

Մենք չը գիտենք թէ յատկապէս Ղուբայի և նրա շրջակաների հրէաները որքան տեղեակ են հայոց լեզուին, և այդ լեզուին տեղեակ են:

քան տեղեակ են հայոց լեզուին, և այդ պատճառով չենք կարող խօսել մանուկներու պէս այդտեղի հրէաների մասին,—բայց ընդհանրապէս ուշադրութեան առնելով այդ լազաւան աշակերտներին հայոց դպրոցներում ընդունելու մանկավարժական ըսկզբունքի հնարաւորութիւնը, չենք կարող չը յիշել այստեղ, որ մեր Անդրկովկասի մի քանի մասերում, որտեղ հայերը ներկայացնում են աւելի խիտ և համեմատելով պակաս խառն ազգաբնակչութիւն՝ հայերի հետ բնակվող թուրքերը, հրէաները մեծ մասամբ խօսում են արդէն հայերէն լեզուով: Կը յիշենք այստեղ Նրեանեան նահանգի մի քանի տեղերը, ամբողջ Ղարաբաղը և Լօռին: Մեզ յայտնի է որ, օրինակ, Ղարաբաղում թուրքերի մեծ մասը (որոնք շատ հաւանական է թէ մահմետական հայեր են) խօսում են հայերէն՝ հայերի պէս. մեզ յայտնի է, նմանապէս, որ Լօռու հրէաները շատ լաւ խօսում են հայերէն, և խօսում են այդ լեզուով նոյն իսկ իրանց ընտանիքում:

Ուրեմն քննելով մեր Ղուբայի թղթակցի յարուցված հարցը ոչ թէ օրէնքի, այլ միայն մանկավարժական սկզբունքի տեսակետից, խոստովանվում ենք, որ անկարող ենք նրա յայտնած մտքերի հետ համաձայնվել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՅՑ

Այս տարի, օգոստոսի 25-ից, Ներսիսեան դպրոցում նոր աշակերտներ ընդունելութիւնը ըսկզբնվեց և տեւեց մինչև 29-ը 72 խնդրատու և ընտնութեան ենթարկված աշակերտներին՝ 34 հոգի բաւարար քննութիւն տուին: Դրանցից 18-ը պատրաստական դասարանի երրորդ կամ բարձր բաժանմունքի համար, 12-ը՝ I դասարանի, երեքը՝ II և մէկը երրորդ (III-ը) դասարանի քննութիւն տուին: Նախապատրաստական համար քննութեան ենթարկվեց մէկն ընդունվեց միայն, միւս տասնը հօթել, տեղ չը լինելու պատճառով մնացին կանգնաւ:

Դասերը սկսվեցան ճիշդ սեպտեմբերի մէկից և սեպտեմբերի երկուսից արդէն ներկայ էին՝ պատրաստական դասարանի առաջին բաժնում 40 աշակերտ, երկրորդ բաժնում 40 աշ., առաջին դասարանի առաջին բաժնում 46 աշ., երկրորդ բաժնում 43 աշ., II դասարանի առաջին բաժնում 36 աշ., երկրորդ բաժնում 37 աշ., III դասարանի առաջին բաժնում 17 աշ., երկրորդ բաժնում 18 աշ., IV դաս. 40 աշ., V դաս. 33 աշ., VI դաս. 16 աշակերտ:

Այդ դասարաններն իրանց տարածութեան կամ մեծութեան նկատմամբ հաղել հաղ կարող են այդքան աշակերտներ ամփոփել. թէպէտ 3, 5 և 6-դ դասարաններում կարելի էր մի քանի աշակերտ էլ աւելի ընդունել:

Պատրաստականների, առաջինների և երկրորդ ու չորրորդ դասարանների համար որոշեց հոգաբարձութիւնը, որ աշակերտները վերալինալ թիւը չաւելանայ, իսկ միւս դասարանները մասին որոշ թիւ չէ սահմանած, բայց ընդունելութիւն այլ ևս չի լինի: Ուրեմն այս րօպէիս Ներսիսեան դպրոցն ունի 364 աշակերտ: Այդքան աշակերտները դեռեղված են 11 դասարանում: Ուսուցիչների թիւն է 23 հոգի: Դպրոցն ունի 4 վերակարգ, որոնցից երկուսը դասեր էլ ունեն. ամենայն օր երկու վերակարգու պէտք է հսկեն աշակերտներին: Բոլոր պաշտօնատարների թիւն է 25 հոգի, որոնց մէջ են և տեսուչը, և տեսչի օգնականը, և չորս վերակարգուները, և գրադարանագետը: Բոլորին միասին ամսական ռոճիկ է տրվում 2,000 րուբլուց մի բան աւելի: Ուսումն

ն է աշակերտներին համար և դպրոցը տալիս է 70-ից աւելի աշակերտներին դասական պիտոյը: Ներսիսեան դպրոցը պահում է 25 որդեգիր աշակերտներ, որոնցից ամեն մէկը դպրոցին արժէ տարին 300 րուբլի: Թէև առողջապահական պահանջներին համեմատ իւրաքանչիւր աշակերտի վրա պէտք է 3 խորանարդ սածէն օդ լինի դասարանում, բայց Ներսիսեան դպրոցի ոչ մի դասարանում մի ամբողջ խորանարդ սածէն օդ էլ չէ ընկնում աշակերտներին: Դպրոցի շէնքը, բացի այն որ շատ վաղ էր այժման պահանջների նըկատմամբ, մի և նոյն ժամանակ առողջապահական պահանջներին էլ ըստ ամենայնի հակառակ է:

Այն ջանքն ու եռանդը, որ ուսուցիչներն են ցայց տալիս ուսման մասին, անուրանալի է. բայց արդեւք միշտ ցանկացածից պակաս է լինում: Դրա պատճառը գլխաւորապէս կայանում է աշակերտների ընտանեկան հանգամանքների մէջ: Աշակերտների ստուար մեծամասնութիւնը զուրկ է ընտանեկան խնամքից. դպրոցի և ընտանիքի մէջ չը կայ համեմատելիութիւն ոչ կրթութեան, ոչ դասերի պատրաստութեան, ոչ ուսման պիտոյների մատակարարութեան և ոչ դարգացուցիչ պարապմունքների նկատմամբ: Ինչ որ ուսումնարանի նպատակն է ձգտումներին հակառակ է՝ այն են սենում ու լսում մեր աշակերտներն ընտանեկան և հասարակական չըբանում: Դպրոցը պէտք է ունենար աշակերտական մի ընթերցարան, ուր զոնէ կիրակի և տօն օրերում աշակերտները ազատ ընթերցանութեամբ պարապելով դարգանային. բայց դրանից զուրկ է դպրոցը: Դպրոցը չունի մարմնական առողջութեան համար ամենակարեւոր բանը՝ այն է՝ մարմնամարզարան:

Օրական 5—6 ժամ դպրոցում և մի այդքան էլ տանն են պարապում աշակերտները, բայց թէ դպրոցի և թէ տան առողջապահական դրութիւնը բաւարար չէ նրանց առողջութեան: Դպրոցի վարչութիւնը պէտք է մարմնամարզութիւն մշտնը դպրոցի մէջ, բայց դպրոցի շէնքն այդ մասին յարմարութիւն չունի:

Հոգաբարձութիւնը կարող էր թէ աշակերտական ընթերցարան հիմնէ և թէ մարմնամարզարան շինէ, կից կամենար: Վաճառելու փոփոխումնարանապատկան աղաւթ հողի վրա կարող էր մի ընդարձակ սրահ կառուցանել՝ որ մեծ դուռով չէր արժենայ իբրև մի հասարակ ծածկոյթ՝ արեւից ու ցրտից պատսպարելու. մի երկու երեք հազար րուբլին բաւական էր մի այդպիսի հասարակ շէնքի համար: Դպրոցի վարչութիւնը պէտք է վաղ թէ ուշ համոզվի, որ այժմ դպրոցի շէնքը, իր փոքրութեամբ և անյարմարութեամբ համապատասխան չէ հասարակութեան: Կրթական պահանջներին Հասարակութեան աղքատ և մասամբ միջին դասի երեխաները՝ բուն Թիֆլիսից և դաւաաներից դիմում են Ներսիսեան դպրոցը, որ ամբողջ Վրաստանի և Ղազախի վիճակում միակն է, իբրև հայոց հոգեւոր միջնակարգ դպրոց. դա պէտք է գոնէ 6—8000 աշակերտ ընդունել կարողանար, այն ինչ՝ այժմ 360—400 աշակերտ էլ հաղիւ կարող է ընդունել՝ այն էլ առանց հակառողջական պայմանների: Միթէ ժամանակ չէ՝ այս ամենակարեւոր խնդրի մասին մշտածելու:

ԹԻՖԼԻՍԻ ՁԻԱՐՇԱՆՑ

Չորեքշաբթի, սեպտեմբերի 14-ին, Դիդուբէ կոչված գաղտնում, Մուշտայից այգու ետև, տեղի ունեցաւ այս տարվայ առաջին ձիարշաւը: Լաւ եղանակի շնորհով ահագին ամբողջ լցրել էր թէ դաշտի վրա շինված վճարելի տեղերը և թէ շրջապատել էր ամբողջ դաշտը: Մակայն այս անգամի ձիարշաւը առանձին հետաքրքիր ոչինչ չէր ներկայացնում: Այդ օրվայ չորս ձիարշաւներից իւրաքանչիւրում մասնակցում էին մէկ, երկու և

ամենաշատը՝ երեք ձի: Ինչպէս երևում է կովկասեան ձիատէրերը դեռ ևս շատ մոթ հասկացողութիւն ունեն Թիֆլիսում տեղի ունեցող ձիարշաւերի մասին, և շատ քիչ են մասնակցում այդ ձիարշաւներին: Սեպտեմբերի 14-ի ձիարշաւը, ինչպէս ասեցինք, բաղկացած էր չորս բաժնից:

1) Թիֆլիսի ձիարշաւի ընկերութեան կողմից նշանակված էր 350 ր. մրցանակ ամեն երկրորդի չորս տարեկանից աւելի ձիերի համար: Անցնելի ամբողջութիւնը պէտք է լինէր 3 վերստ Այս բաժնում վաղում էին. ա) պ. Բերդի «Խրէնօսկի» ձիապահ հիմնարկութիւնից դուրս եկած «Րօյալ-Մէր» մատակը և բ) պ. Գրամօտինի «Բուրլայի» բերած «Ալկիտ» ձին: Մրցանակը տարաւ «Րօյալ-Մէր»:

2) Պետական ձիապահութեան վարչութեան կողմից նշանակված էր 500 ր. մրցանակ կովկասում ծնված, երեք տարեկանից ոչ պակաս ձիերի համար: Անցնելի տարածութիւնը պէտք է լինէր 3 վերստ: Վաղում էին. ա) պ. Պեդիսովի արաբական կաբարդեան ցեղերից առաջ եկած խառնուրդ «Լիդա» մատակը. բ) պ. Ջիւզադարովի սեփական ձիապահական հիմնարկութեան «Բոսորով» ձին և գ) պ. Բաքիբեկովի «Բարլան» ձին, որը առանձնակցւած էր Ջիւզադարովի ձիապահական հիմնարկութիւնից: շէնք սկզբից «Լիդան» յետ մնաց, իսկ միւս երկու ձիերը հաւասար էին դնում, բայց վերջին շրջանում «Բոսորով» իր քայլերն աւելացրեց և առաջինը տեղ հասնելով տարաւ մրցանակը:

3) Պետական ձիապահութեան գլխաւոր վարչութեան կողմից նշանակված էր 500 ր. մրցանակ, կովկասում ծնված, չորս տարեկանից ոչ պակաս ձիերի համար: Տարածութիւնը 5 վերստ էր որոշված: Վաղում էր միայն մի ձի, այն է «Մուդա» անգլիական և կաբարդեան ցեղերից առաջ եկած խառնուրդ մատակը, որը հաւասար կերպով անցնելով 5 վերստ 9 րօպէում և 12 վայրկեանում, տարաւ մրցանակը:

4) Թիֆլիսի ձիարշաւական ընկերութեան կողմից նշանակված էր մրցանակ մի արծաթէ թաս «Խրիդներ» արշաւի համար: Ձիերը պէտք է անցնէին երկու վերստ (ուղից մի շրջան): Վաղում էին ա) պ. Բերդի, առաջին արշաւում մասնակցած «Րօյալ-Մէր» մատակը, բ) պ. Ջիւզադարովի «Խրեակ» ձին և գ) պ. Մադէրի «Վանկա» Ղարաբաղի ձին: Ամենքից առաջ տեղ հասաւ «Րօյալ-Մէրը», զորակի ետև թողնելով միւս երկուսին:

Տօտալիզատօր այդ բոլոր արշաւների ժամանակ տալիս էր 1 ր.—20 կոպէկից, մինչև 1 ր. 80 կ.: Ձիարշաւը սկսվեց 3 1/2 ժամին կէսօրից յետոյ և վերջացաւ 5 1/2 ժամին: Հետեւալ ձիարշաւը, ինչպէս արդէն հաղորդել էինք, լինելու է վաղը, կիրակի, ամսիս 18-ին:

ՆԱԲԱԿ ԿԱՐՄԻՑ

Սեպտեմբերի 11-ին

Այս րօպէիս կարսը ներկայացնում է մի կիւսաքանդ քաղաք: Աւերակների միջից սուսկի նման հետզհետէ բնում, աճում են կրպակներ սրբատաշ քարերով, բացվում են ընդարձակ, ուղղահայտ փողոցներ. հին կարսը տեղի է տալիս նորին: Տնօրինված է վերաշինել կարսը նոր յատակադրի համեմատ և առ այժմ այդ նորոգութիւնը սկսված է կրպակներից: Որքան և օգտակար է այդ բանը քաղաքի գեղեցկութեան տեսակետից, սակայն ժողովրդի դրութեան կողմից դա մի ծանր հարուած է:

Նորաշին կրպակները ունենալու են որոշ մեծութիւն, որ, ի հարկէ, իւրաքանչիւր անձի համար մատչելի չէ նրանց շինելը: Ներկայումս կան առևտրականներ, որոնց խանութի մարմանը հազիւ 50 րուբլու է համարում: Այդպիսի չնչին դրամագլխով առևտրականը կարողանում է մի կերպ հայթայթել իր ընտանիքի օրապահիկը, իսկ ներ-

կարանը իսկականն է թէ կեղծ: Կանցլէր ենթադրում է, որ վերջինն է, և իր գեղարվեստ մէջ, որը ներկայացրել է կայսրին, իբրև ապացոյց առաջ է բերում շատ անճշդութիւններ, որոնք վերաբերում են յատկապէս ֆրանս-գերմանական պատերազմին:

Վիէննա, 16 սեպտեմբեր: «Pol. Corresp.» լրագրին հետադրում են Կ. Պոլսից, որ այն շքանշաններով, որոնք մատիկ ծանօթ են միջին-ասիական զորքերին, կարծում են, որ Արդարաճման-խան մեռել է ըստի մահով, այլ և հաւատարմութեամբ են, որ խիստակ-խանի հետ էմիրի զօրաբանակից փախուստ են տուած շատ անձինք:

Բրիտանիա, 16 սեպտեմբեր: Բելգիական բանակը բարձրացրեց պաշտօնական դիմումը 3-ից մինչև 3 1/2 օր:

Պետերբուրգ, 16 սեպտեմբեր: Չորեքշաբթի, երեկոյան 10 ժամին, Նոյս Կայսերական Մեծութիւնները՝ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին, Թագաւորանոց և Մեծ Խնամ Գեորգի Ալեքսանդրովիչի հետ միասին բարեհաճեցին Սպալայից ուղևորվել դէպի Օլէն Կայսրանը, որտեղից խանգորդ-Գաբրիելան երկաթուղով ճանապարհ ընկան դէպի Կովկաս: Մեծ Խնամ Վլադիմիր Ալեքսանդրովիչ ուղևորվեց դէպի Յարսկոէ-Սելո, իսկ Մեծ Խնամ Նիկոլայ Նիկոլայովիչ կրտսերը ճանապարհ ընկաւ դէպի Տուլա «Journal de St. Pétersbourg» լրագրը, մատնացոյց անելով այն ընդունելութեան վրա, որ արել է Սուլթանը Սերգի և Պալէ Ալեքսանդրովիչ Մեծ Խնամներին և Նիկոլայովիչին Գեորգի Մեծ Խնամներին Կ. Պոլսում, նկատում է, որ Թագաւոր Կայսրի օգոստոսական եղբայրներին Սուլթանի ցոյց տուած սիրալիւր ընդունելութիւնը համապատասխանում է երկու պետութիւնների մէջ եղած փոխադարձ վստահութեան վրա հիմնված յարաբերութիւններին և որ Ռուսաստանին արտօրծելի

է տեսնել, որ Բ. Գառը օգուտ չաղեց Մեծ Խնամներին ներկայութիւնից Կ. Պոլսում ցոյց տալու համար, յօգուտ ընդհանուր խաղաղութեան այդ յարաբերութիւնների հաստատուն և սրտազին լինելը:

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

ՎԱՍԻԿԱՎԱՍՍ. Մէլքեանց. Տասն և վեց տարի է արդէն որ մենք բացատրում ենք մեր բաժանորդներին, որ հասցէն փոխելու ժամանակ բաժանորդը պէտք է հաղորդէ իր նամակում թէ մինչև այդ օրը նա իրենց էր ստանում լրագիրը, կամ պէտք է ուղարկէ խմբագրութեանը լրագրի տպված բանդերը: Բայց ոչինչ չէ օգնում Գաբրիել Նոյնին էք անում. դուք ուղարկել էք մեզ Մաւալա քաղաքից մի նամակ, 4 հատ և օթ կօպէկանոց մարկաներով, խնդրելով որ այսուհետև ձեր համարները ուղարկէիք Վաղրիկովսկաս, բայց չէք դրում թէ մինչև այժմ իրենց էիք ստանում «Մշակը»: Նայում ենք մեր մատնանում, Մաւալա քաղաքում ձեր աղբանումը չը կայ: Ուրեմն ուրիշ տեղ էիք ստանում. բայց ինչի չէք դրում թէ որտեղ կարծում էք մենք պէտք է անդիմի յիշեք հաղարկ աւելի բաժանորդների բոլոր աղբանումները: Մեր մատնանը քաղաքների այլ-բոլորական ցանկով է կաղված և ոչ աղբանումներով: Եթէ ուղում էք, որ մենք Վաղրիկովկաս ուղարկենք ձեր համարները, պէտք է խանանք թէ առաջ իրենց էիք ստանում, որպէս զի այնտեղ դադարեցնենք համարների ուղարկելը: Մենք ամենին պարտաւոր չենք երկու տեղ ուղարկել լրագիրը մի և նոյն բաժանորդի անունով, համ առաջվայ տեղը, համ էլ նոր հասցէով: Տասն վեց տարի շարունակ կրկնում ենք այդ տեսակ պարզ բան, և տասն և վեց տարի շարունակ հայը դեռ ևս չը կարողացաւ հասկանալ մեր ասածի անհրաժեշտութիւնը: Եթէ 16 տարվայ ընթացքում հայը չը կարողացաւ հասկանալ այդ տեսակ պարզ բան, էլ ինչ կը հասկանայ նա աւելի բաղադրեալ գաղափարները....

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԻԳԱՅԱՆ ԿԻՐԱԿԱՆԱՅ ԶՐԻԱԹՈՇԱԿ ԴՊՐՈՑՈՒՄ (Հասակաւորների և երեխաների համար, 10 տարեկանից ոչ պակաս) ուսուցանում են կարգալ, զրել և հաշուել հայոց, ռուսաց և վրաց լեզուներով: Ընդունելութիւնը կը լինի ամենայն կիրակի: Պարագմունքը տևում է 12 ժամից մինչև ժամի 3-ը:
Կարողը գտնվում է Չալվալաձեկի փողոցում, Ֆեդորենկոի տանը, Գաղաթային Արհեստաւորաց Իգական դպրոցի շինութեան մէջ:
1—3 (Ծ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 23 սեպտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՅ ղուրս կը գնայ շոգենաւ MENDOZA (ՄԵՆԴՈՅԱ) նաւապետ AUGÉ (ՕՅԷ) մանելով Կ. Պոլս, Զմիռնիա և Սիրա:
Աղէնտները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՈՐԳ ԷՆՋՈՒԲԵԱՆՑ:
2—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱՐԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ սեպտեմբեր ամսին 21-ին լինելու է աճուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տարու դպրոցի պատկանեալ 21 կրպակները, որոնք գտնվում են Ներսիսեան հին դպրոցի հանդէպ: Պայմանաթուղթը կարելի է կարգալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10—12 ժամին:
3—3

ԿԱՌԻՉՈՒԿԵԱՆ ՕԾԱՆԵԼԻՔ ԶԱՀՃԱՅԻՆ ԿՕՇԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Գ Ո Ր Մ Ա Ր Ա Ն Ի
Բ. ԿԵՕԼԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
Կալին շատ փափկացող է և ամենին խոնաւութիւնը չէ անցկացնում:
Էժան է դրա նման բոլոր օժանկիւնների:
Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր առեւտրականների մօտ. Մօսկվայում Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա:
№ 3. II. K. O. (2—3)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր
BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Հինգշաբթի, սեպտեմբերի 29-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒՆ (GIBOIN) ղուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ Լեմուրուի տան, Նաբերեճնայա, և Թիֆլիսում՝ Նախիկ Արծրունի գալլերեում, № 103.
1—3

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԵՑԱԻ
„Լ Ի Ր Թ Ա Գ Ա Ի Ո Ր“
Շէկապիրի ողբերգութիւնը Թարգմ. Ստեփ. Մալխասեանց
ԳԻՆՔ ՄԵԿ ԲՈՒՐԼԻ: Գումարով առնողներին զիջում կը լինի: Գիմել Թարգմանչին
C. Петербургъ, Литейный, 27.
3—3 (Ծ)

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնադիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Առեւտրականը ստանում են ա տ տ ե տ ա տ ն ե Ր:
Աւանդելի աւարկայք տըք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առեւտրական Թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) գեղարվեստութիւն:
Առումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոյուզայից տըք են՝ 1) Առեւտրական փողոցի վրա, № 11: Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր ֆրիդմանովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազդեմայա փողոցների անկիւնում, ղեկատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶԻՆԱՊԷՍ եղբ. Ծոյլանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում են կուրսերի հիմնողին.—Въ Тифлисѣ, С. П. Мануэляну.
15—20 (Ե. Ծ.)

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՆՈՐ ՄԱԳԵԱՆ ԿՐԱԿՆԵՐ
մետաղական փամփուշտներում, սաստիկ պայծառ և տղաւորութիւն անող են հրաւառութեան համար սնեակներում և այլններում, եկեղեցական արարականներ լուսաւորելու համար և հանդիսաւոր գնացքների համար: Արվում են առանց ծխի և հոտի և անվտանգ են փոստով ուղարկելու համար:
Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր առեւտրականների մօտ. Մօսկվայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա:
№ 3. II. K. O. (2—3)

Societa Generale italiana di Navigazione.
117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵՇ ՇՈԳԵՆԱԿԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԻՏԱԼԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՎԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրօպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ: Շոգենաւերը Բաթումից ղուրս են դալին Կանոնաւորապէս ամեն շաբաթ:
1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից ղուրս են դալին ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պոլս:
Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԻՐՈՒՍԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլովինսկի պրօսպ. № 34 և ԲԱԹՈՒՄԻՄ—Իշխ. Գուրիէլի տանը:
26—40

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ
ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆԻՅ
Այդ էլիկսիրը հնարել է 1373 թին վանահայր ՊԵՐՐՈՍ ԲՈՒՐՍՕ:
Այդ էլիկսիրի մի քանի կաթիլների ամենօրեայ գործածութիւնը պահպանում է առաջները փշանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և Թարմացնում է բերանը:
Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են դարձեալ ԱՍՄՆԱՓՕՇԻ և ՊԱՍՏԱ առամներ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆիւմերական մագազիններում:
ԳԼԽԱՌՈՐ ԱԳՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.
27—30 (Ծ.)